

Աշխարհի Տարբեր Վայրերուն Այն Ոգեկոչուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 108-րդ Տարելիցը



Երեւանի մէջ բազմահազար ժողովուրդ կ'այցելէ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

Ապրիլ 24-ին, Հայու թիւնը նշեց Հայոց Ցեղասպանութեան 108-ամեակը անգամ մը եւս յիշեցնելով իր պահանջատիրութեան մասին: Աշխարհի տարբեր մայրաքաղաքներուն մէջ նախագահներ, վարչապետներ, խորհրդարաններու անդամներ եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ հանդէս եկան յայտարարութիւններով՝ դատապարտելով Հայ ժողովուրդի դէմ կատարուած անարդարութիւնը:

Երեւանի մէջ բազմահազար մարդիկ այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու թուրքիոյ կողմէ գործադրուած, 20-րդ դարու առաջին Ցեղասպանութեան զոհ՝ աւելի քան մէկուկէս միլիոն հայերու յիշատակին:

Առաւօտեան, Հայաստանի ղեկավարութիւնը Ծիծեռնակաբերդի Ցուշահամալիրէն ներս յարգանքի տուրք մատուցեց Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ազգային Ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան, բարձրաստիճան այլ



Կլէմտէի մէջ տեղի ունեցած հանրահաւաքի ընթացքին ելոյթ կ'ունենայ գոնկրէսական Ատան Շիֆ

պաշտօնեաներ ծաղկեպսակ դրին Ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող յուշարձանին մօտ, ծաղիկներ խոնարհեցին անմար կրակին մօտ:

Ցեղասպանութեան զոհերու ոգեկոչման օրուան իր ուղերձին մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան մասնաւորապէս ըսաւ.

«Ապրիլի 24-ին մենք ոգեկոչում ենք 20-րդ դարակազմում Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց Ցեղասպանութեան 1,5 միլիոն զոհերի յիշատակը, եւ տասնեակ հազարաւոր քաղաքացիներ այսօր յարգանքի, յիշատակի եւ խոկումի երթ կ'իրականացնեն դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

«Ապրիլ քսանչորսեան երթը, թերեւս, մեր իրականութիւնը կանխորոշած ու կանխորոշող ամենաազդեցիկ երեւոյթն է, մեր պատմութեան, անցեալի եւ ապագայի մասին մտածելու մի բացառիկ օր: Ի՞նչ են մտածում դէպի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր յաճախ մանկահասակ երեխաների ձեռքերը բռնած քայլող երիտասարդ ծնողները, կամ կեանքի աւելի մեծ փորձառութիւն ունեցող տատիկներն ու պապիկները:

Ամերիկայի Նախագահ Ծո Պայտընի Ուղերձը

Ամերիկայի Սիացեալ Նահանգներու նախագահ Ծո Պայտըն ուղերձ յղած է Հայոց Ցեղասպանութեան 108-րդ տարելիցին առնչութեամբ:

«Այսօր մենք դադար կը վերցնենք՝ յիշելու Մեծ Եղեռնի՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերը եւ կը թարմացնենք մեր խոստումը՝ երբեք չմոռնալ:

1915 թուականի Ապրիլ 24-ին օսմանեան իշխանութիւնները ձեռքաւարեցին Կոստանդնուպոլսոյ հայ մտաւորականները եւ համայնքի ղեկավարները, որով սկիզբ դրուեցաւ հայ համայնքի դէմ բռնութեան համակարգում արշաւին: Անոր յաջորդող տարիներուն մէկուկէս միլիոն հայեր տեղահանեցին, կոտորեցին կամ երթի տարին դէպի մահ՝ ողբերգութիւն, որ ընդմիշտ ազդեց հայ ընտանիքներու սերունդներուն վրայ:

Այս ցաւալի պատմութիւնը յիշելով միանալով աշխարհի տարբեր երկիրներուն՝ մենք նաեւ կ'անդրադառնանք հայ ժողովուրդի տոկունութեան եւ վճռակամութեան: Ողջ մնացածներէն շատերը ստիպուած եղան նոր կեանք սկսիլ նոր երկիրներու, այդ շարքին՝ Սիացեալ Նահանգներու մէջ: Այստեղ եւ ամբողջ աշխարհի մէջ հայ ժողովուրդը յոյսով դիմաւորած է ատելութեան չարիքը: Անոնք վերակառուցեցին իրենց համայնքները: Անոնք դաստիարակեցին իրենց ընտանիքները եւ պահպանեցին իրենց մշակոյթը: Անոնք հզօրացուցին մեր ազգը: Անոնք նաեւ պատմեցին իրենց եւ իրենց նախնիներուն պատմութիւնները՝ յիշելու եւ համոզուելու, որ 108 տարի առաջ տեղի ունեցած Ցեղասպանութիւնը այլեւս երբեք պիտի չկրկնուի:

Այսօր եկեք թարմացնենք այս խոստումը: Եկեք կրկին պարտաւորուինք դէմ արտայայտուելու ատելութեան, պաշտպանելու մարդու իրաւունքները եւ կանխելու վայրագութիւնները: Եւ միասին եկեք կրկնապատկենք մեր ջանքերը՝ կերտելու աւելի լաւ ապագայ, ուր բոլոր մարդիկ կրնան ապրիլ արժանապատուութեամբ, ապահով եւ յարգանքով», նշած է Ծո Պայտընը:



ՍԴՀԿ պատուիրակութիւնը Ծիծեռնակաբերդի Ցուշահամալիրին մօտ

«Պետութիւնը, միայն զարգացած եւ ինքնիշխան պետութիւնն է ի վիճակի ապահովել մեր ժողովուրդի լինելիութիւնն ու անվտանգութիւնը, իսկ պետութեան կայացման գործում իւրաքանչիւրն ունի անելիք՝ կրթութեամբ, աշխատանքով, քաղաքացիական պատասխանատուութեամբ ու օրինապահութեամբ»:

Աւելի ուշ Ցուշահամալիր այցելեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եկեղեցական դասի ընկերակցութեամբ:

ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան անդամները ՀՄՄ-ի սկաւառներու ընկերակցութեամբ այցելեցին Ծիծեռնակաբերդ, ու ծաղկեպսակներ գետեղեցին Ցուշահամալիրին մօտ՝ խոնարհելով Հայ ժողովուրդի բոլոր նահատակներու յիշատակին առջեւ:

Լոս Անճելըսի Հայու թիւնը Ցեղասպանութեան տարելիցը նշեց բազմաթիւ միջոցառումներով, որոնց կ'անդրադառնանք առանձին (էջ 6):

ԼՈՒՐԵՐ

Իգական Սեռի Քաղաքացիներուն Համար Կամաւոր Ձինուորական Ծառայութիւն



ՀՀ կառավարութեան հերթական նիստին հաւանութիւն տրուած է «Ձինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրէնքին մէջ լրացումներ եւ փոփոխութիւն կատարելու մասին» եւ «Պաշտպանութեան մասին» օրէնքին մէջ լրացումներ կատարելու մասին» օրէնքներու նախագիծերուն:

Օրէնքներու նախագիծերու փաթեթի ընդունման անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է ՀՀ կառավարութեան 2021-2026թթ. ծրագրին համապատասխան իգական սեռի քաղաքացիներու կողմէ կամաւոր հիմունքներով պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելու հնարաւորութեան ստեղծման անհրաժեշտութեամբ: Նախագիծերու փաթեթին համաձայն կը սահմանուին կամաւոր հիմունքներով պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելու ցանկութիւն յանկուցիւն յայտնած իգական սեռի քաղաքացիներու կողմէ այդ նպատակով դիմելու, անոնց զինուորական հաշուառման, զօրակոչի, ծառայութեան վայր նշանակման, ծառայութեան աւատէն յետոյ պատուովճարի հաշ-

ուարկման հետ կապուած յարաբերութիւնները: Մասնաւորապէս, նպատակայարմար է գտնուիլ անոնց պարտադիր զինուորական ծառայութեան ժամկէտը սահմանել 6 ամիս: Յատկացուին անոնց կողմէ կամաւոր հիմունքներով պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելու դիմումներու ներկայացման ժամկէտերը՝ այն տրամաբանութեամբ, որպէսզի հնարաւոր ըլլայ պատշաճ կարգով եւ ժամկէտերու մէջ իրականացնել անոնց զինուորական հաշուառման, ներառեալ՝ անհրաժեշտ բժշկական հետազօտութիւններու եւ փորձաքննութեան գործընթացը: Կը նախատեսուի սահմանել անոնց զօրակոչի կազմակերպման առանձնապատկութիւնները, ինչպէս նաեւ մինչեւ պարտադիր զինուորական ծառայութեան զօրակոչուիլը իգական սեռի քաղաքացիներու կողմէ պարտադիր զինուորական ծառայութիւն անցնելէ հրաժարելու հնարաւորութիւնը:

Պարտադիր զինուորական ծառայութիւնը անցնելէ յետոյ անոնց համար պիտի սահմանուի պատուովճար՝ 1 միլիոն դրամ չափով:

«New York Times»-ի Համաձայն. Ռուսիան Կը Շրջանցէ Պատժամիջոցները Հայաստանի Եւ Ղազախստանի Օգնութեամբ

«Ռեքրանիոյ մէջ սկիզբ առած պատերազմէն յետոյ Ռուսիան սկսած է շարք մը ռազմական նշանակութեան ապրանքատեսակներ ներմուծել Հայաստանի եւ Ղազախստանի օգնութեամբ՝ շրջանցելով պատժամիջոցները», վերջերս հրատարակուած յօդուածի մէջ կը պնդէ ամերիկեան «The New York Times» պարբերականը:

Թերթը կը վկայակոչէ ԱՄՆ Հարկային Ծառայութիւններու եւ Առեւտուրի Նախարարութեան աշխատակիցներուն մասնակցութեամբ Մարտ 24-ին տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ ներկայացուած նիւթերը: Անոնց համա-

ձայն՝ 2022 թուականին, նախորդ տարուան համեմատ, Միացեալ Նահանգներէն Հայաստան չիփերու եւ փրոցեսներու ներկրումը աճած է 515 տոկոսով: Նոյն ապրանքատեսակներու ներկրումը ԵՄ պետութիւններէն Հայաստան 2022 թուականին աճած է 212 տոկոսով:

«Ներկրուած արտադրանքին 97 տոկոսը հետագային վերաարտահանուած է Ռուսիա», կը պնդէ «The New York Times»-ը:

Թերթին պնդմամբ՝ ներկրուած սարքաւորումները կարեւոր նշանակութիւն ունին Ռուսիոյ ռազմական արդիւնաբերութեան՝ մասնաւորաբար հրթիռներու արտադրութեան համար:

Պետութիւնը Կ'ուզէ Բռնագանձել Յովիկ Աբրահամեանի Ապօրէն Կալուածները

Հակափտածութեան դատարանին մէջ դատախազ Տիգրան Ենոքեանէն աւելի քան 20 վայրկեան պահանջուեցաւ՝ թուարկելու, թէ պետութիւնը ինչ գոյք ու որքան գումար կ'ուզէ բռնագանձել նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանէն ու անոր ընտանիքի անդամներէն:

Մօտ երկու տարի տեւած ուսումնասիրութեանէն յետոյ իրաւապահները կը յայտարարեն, որ բաւարար ապացոյցներ չկան անոնց օրինական ծագման վերաբերեալ:

Աբրահամեանները առաջին դատական նիստին ներկայ չէին: «Յօգուտ Հայաստանի Հանրապետութեան բռնագանձել քաղաք Երեւան, Կեդրոն, Տէրեան փողոց 66 շէնքի 18 բնակարանը», ներկայացուց դատախազը:

Դատախազութիւնը կը պնդէ, որ Աբրահամեանները, ինչպէս նաեւ

Գազիկ Ծառուկեանին Մեղադրանք Առաջադրուած Է Ընտրակաշառք Տալու Գործով

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գազիկ Ծառուկեանին առնչուող, 2020 թուականին յարուցուած քրէական գործը, որով Ծառուկեանը կը մեղադրուի ընտրակաշառք տալու մէջ, ուղարկուած է դատարան: Այս մասին յայտնած է ՀՀ Գլխաւոր Դատախազութիւնը:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մէջ քննուած քրէական գործով հիմնաւորուած է, որ Գազիկ Ծառուկեանը եւ «Մուլթի Կրուփ»-ի տնօրէն Սեդրակ Առուստամեանը կաշառք տուած են ընտրողներուն ՀՀ Ազգային Ժողովի 2017 թուականի ընտրութիւններուն իրենց դաշինքին եւ դաշինքի թեկնածուին օգտին քուէարկելու համար:

Գազիկ Ծառուկեանին եւ Սեդրակ Առուստամեանին մեղադրանք առաջադրուած է ընտրողներուն կաշառք տալու յօդուածով:

2023 թուականի Ապրիլ 21-ին հսկող դատախազին կողմէ հաստատուած մեղադրական եզրակացութիւնը վարոյթի նիւթերուն հետ յանձնուած է Հակափտածութեան դատարան:

Քրէական գործը յարուցուած էր 2020 թուականի Յունիսին: Այդ ժամանակ Գազիկ Ծառուկեանը ԱԺ պատգամաւոր էր, Ծառուկեանին անձեռնմխելութեան զրկելու եւ անոր նկատմամբ քրէական հե-



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գազիկ Ծառուկեան

տապնդում սկսելու համար Գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը միջնորդութիւն ներկայացուցած էր Ազգային ժողով: Դատախազին միջնորդութիւնները բաւարարուած էին: 2020 թուականի Սեպտեմբերին Գազիկ Ծառուկեանը կալանաւորուած էր: Նոյն տարուան Հոկտեմբեր 22-ին դատարանը որոշում կայացուցած էր Գազիկ Ծառուկեանը ազատ արձակել 100 միլիոն դրամ գրաւի դիմաց: Ծառուկեանը չէր ընդունած իրեն առաջադրուած մեղադրանքը եւ յայտնած էր, որ ինքը քաղաքական հետապնդման կ'ենթարկուի:

Ամուսնալուծութեան Ամենաբարձր Ցուցանիշը Արձանագրուած Է Երեւանի Մէջ

Հայաստանի մէջ ամուսնալուծութեան ցուցանիշերը մտահոգիչ են: Այդ ծիրին մէջ աւելի սուր է խնդիրը Երեւանի մէջ: 2022 թուականի տուեալներով, ամուսնալուծութիւններու ցուցանիշով առաջատարը մայրաքաղաքն է:

«Մի կողմից Հայաստանում զոյգերը բաւական ուշ են ամուսնանում, բայց միւս կողմից մենք ունենք ամուսնալուծութիւնների շատ լուրջ խնդիր: Երեւանում 2022 թուականի տուեալներով իւրաքանչիւր 2.5 ամուսնութեանը բաժին է ընկնում 1 ամուսնալուծութիւն: Դա սոսկալի ցուցանիշ է: Սա նշանակում է, որ այն օղակը,

որտեղ պէտք է ձեւաւորուի ընտանիքը, ծնունդ են բերեցանք, արդէն խնդիր ունի», այս մասին նշեց ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամի հայաստանեան գրասենեակի հասարակայնութեան հետ կապերու համակարգող Մհեր Մանուկեանը՝ անդրադառնալով ժողովրդագրական մարտահրաւէրներուն:

Երեւանին կը յաջորդէ Լոռին, ուր 3 ամուսնութեան բաժին կ'իյնայ 1 ամուսնալուծութիւն: Հայաստանի մէջ ամուսնալուծութեան ցուցանիշով ամենաբարձրը Գեղարքունիքի մարզն է: Այստեղ 7 ամուսնութեան բաժին կ'իյնայ 1 ամուսնալուծութիւն:

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Երեք Ամսուան Մէջ Աճած Է 12,2 Տոկոսով

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2023 թուականի Յունուար-Մարտ ամիսներուն 12,2 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին նկատմամբ:

Այս մասին կը փաստեն ՀՀ վիճակագրական կոմիտէին հրատարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքին ծաւալը այս տարուան Յունուար-Մարտին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աւելցած է 3,6 տոկոսով: Իսկ գիւղատնտեսական համախառն արտադրանքի ծաւալը տարուան առաջին 3 ամսուան մէջ աւելցած է 1,4 տոկոսով:

Շինարարութեան ծաւալը

2023թ. Հունվար-մարտ 2022թ. Հունվար-մարտ ԿԱՏՄԱՐ		Համաձայն գինով (%)	
Տնտեսական ակտիւն (GDP)	112.2%	Արդյունաբերություն	103.6
Արտադրանքի արժեք (արժ) (PPI)	107.2%	Փողատնտեսություն	101.4
Արտադրանքի արժեքի արժեք (PPI)	202.2%	Էլեկտրություն	115.6
Արտադրանքի արժեքի արժեք (PPI)	226.5%	Առևտուր	121.0
Արտադրանքի արժեքի արժեք (PPI)	189.1%	Ծառայություններ	122.9

2023-ի 3 ամիսներուն նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 15,6 տոկոսով:

Առեւտուրի շրջանառութեան մէջ Յունուար-Մարտին 2022-ի Յունուար-Մարտի նկատմամբ յաւելումը կազմած է 21 տոկոս: Նոյն ժամանակահատուածին մատուցուած ծառայութիւններուն ծաւալը աւելցած է 22,9 տոկոսով:

Նախկին վարչապետի վարորդը, թիկնազօրի աշխատակիցը, որոնց անուններով եւս նախկին բարձրաստիճան պաշտօնեան գոյք գնած է, պետութեան պէտք է վերադարձնեն 59 անշարժ գոյք՝ 15-ը Երեւանի՝ մեծամասամբ կեդրոնին մէջ:

ԼՈՒՐԵՐ

Անոնք Նաեւ Մեր Ձոհերն Են, Որովհետեւ Խօսքը Կը Վերաբերի Ամբողջ Մարդկութեան Ողբերգութեան. Պրուևո Ռեթայօ



Նիկոլ Փաշինեան Ֆրանսացի Ծերակոյտականերուն հետ հանդիպումի ընթացքին

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Ֆրանսայի Ծերակոյտին մէջ մեծամասնութիւն կազմող «Հանրապետականներ» խմբակցութեան նախագահ, Ծերակոյտին մէջ Լեւոնային Ղարաբաղի հարցով խումբի հիմնադիր եւ նախագահ, Արեւելքի քրիստոնեաներու հարցով կապի խումբի նախագահ Պրուևո Ռեթայօյի գլխավորած պատուիրակութիւնը:

Վարչապետը ողջունած է Ծերակոյտի պատուիրակութեան այցը Հայաստան եւ բարձր գնահատած է Ֆրանսայի աջակցութիւնը Հայաստանին այս բարդ ժամանակաշրջանին: Կառավարութեան ղեկավարը առանձին շնորհակալութիւն յայտնած է Ծերակոյտին՝ Հայաստանին ու ԼՂ-ին վերաբերող կարեւոր բանաձեւեր ընդունելու համար:

«Այս անգամ դուք այստեղ էք գտնուում Հայոց Յեղասպանութեան տարելիցի օրը՝ կարեւոր եւ խորհրդանշական օր մեզ համար: Ինչպէս իմ այսօրուայ ուղերձում եմ նշել՝ սա անցեալի, ներկայի եւ ապագայի մասին խորհելու ամենապատեհ պահն է», ըսած է վարչապետը:

Պրուևո Ռեթայօն իր հերթին նշած է. «Այսօր՝ Ապրիլ 24-ին, մենք

հայ ժողովուրդի կողքին ենք եւ ձեզի հետ միասին յարգանքի տուրք կը մատուցենք անմեղ զոհերու յիշատակին: Անոնք նաեւ մեր զոհերն են, որովհետեւ խօսքը կը վերաբերի ամբողջ մարդկութեան ողբերգութեան»:

Ռեթայօն եւս մէկ անգամ յայտնած է Ֆրանսայի աջակցութիւնն ու զօրակցութիւնը Հայաստանին՝ առկա խնդիրներու լուծման ու մարտահրաւէրներու յաղթահարման գործին մէջ:

Զրուցակիցները անդրադարձած են Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեւոնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին, Ատրպէյճանի կողմէ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի յայտարարութեան կոպիտ խախտմամբ Լաչինի միջանցքին ապօրինի անցակէտի տեղադրման, Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման վերաբերող հարցերու:

Տարածաշրջանին մէջ անվտանգութեան եւ կայունութեան ապահովման առումով կարեւորուած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան արդիւնաւէտ գործունէութիւնը:

Պաքուն Երեւանի Առջեւ Դրած Է Պայմաններ Որոնց Շարքին՝ Ութը Գիւղերու Վերադարձը

Երեւանը «պէտք է ութ պահանջ կատարէ Ատրպէյճանի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու համար, այդ շարքին՝ վերադարձնել սահմանամերձ ութ գիւղեր», ելուցի ունենալով ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բաց քննարկման՝ ըսած է ՄԱԿ-ի մէջ Ատրպէյճանի մշտական ներկայացուցիչ Եաշար Ալիեւը:

«Հայաստանը պէտք է կատարէ իր միջազգային պարտաւորութիւնները, ամբողջովին դուրս բերէ իր զինուած կազմաւորումները Ատրպէյճանի տարածքէն, վերադարձնէ Ատրպէյճանի սահմանամերձ տակաւին բռնազրուուած ութ գիւղերը, դադարեցնէ ու ձեռնպահ մնայ տարածքային պահանջներէն, անօրինական գործունէութենէն ու սպառնալից կատարուած թնկէնէն, դադարեցնէ ակնային սահմանախախտումները, լոյս սփռէ քանի մը հազար ատրպէյճանցիներու ճակատագրին վրայ, որոնք անհետացած են հակամար-

տութեան ընթացքին, փոխհատուցէ Ատրպէյճանին պատճառած վնասները եւ բարեխօսէ բանակցութիւններ վարել խաղաղութեան պայմանագրի եւ երկու պետութիւններուն միջեւ սահմաններու սահմանազատման համար», թուարկած է Եաշար Ալիեւը:

Ինչ կը վերաբերի Լաչինի ճանապարհի սկզբնամասին անցակէտ տեղադրելուն, ան ըսած է, որ այդ «Ատրպէյճանի ինքնիշխան տարածքն է», եւ որ «անցակէտի տեղադրումը հիմնուած է պետութիւններու տարածքային ինքնիշխանութեան եւ ամբողջականութեան հիմնարար սկզբունքներու, անվիճարկելի իրաւունքի, արտօնեալ եւ բացառիկ իրաւասութեան եւ պարտականութեան վրայ՝ ապահովելու իր սահմաններուն անվտանգութիւնն ու պաշտպանութիւնը»:

Միւս կողմէ, Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար ձէյ-

Կը Շարունակուին Հակարիի Կամուրջը Բանալու Շուրջ Բանակցութիւնները



Դէպի Ստեփանակերտ տանող Հակարիի կամուրջին վրայ Ատրպէյճանի կողմէ հաստատուած անցակէտ

Ռուսական խաղաղապահ զօրակազմի հրամանատար, զօրավար-մայոր Անտրէյ Վոլքովի մասնակցութեամբ կը շարունակուին Հակարիի կամուրջը բանալու շուրջ բանակցութիւնները: Ռուսները առանձին քննարկումներ կը կատարեն ե՛ւ ատրպէյճանական, ե՛ւ արցախեան կողմերուն հետ, «Ազատութեան» հետ գրոցին տեղեկացուց Արցախի խորհրդարանի իշխող խմբակցութեան ղեկավար Արթուր Յարութիւնեանը:

Արդէն 3-րդ օրը շարունակուող բանակցութիւնները, սակայն, ըստ անոր, տակաւին արդիւնք չեն տուած. - «ընթացքը կայ, բայց որեւէ արդիւնք չկայ»: «Ազատութեան» հարցին՝ բանակցութիւնները երկկողմ են, թէ՛ արցախեան կողմէն ալ կան մասնակիցներ, Յարութիւնեան պատասխանեց. «Եռակողմ չկայ, առանձին-առանձին քննարկումները տեղի են ունենում»:

Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան համաձայն, Լաչինի միջանցքը կը գտնուի ուս խաղաղապահներու վերահսկողութեան գոտիին մէջ: Ատրպէյճանը կիրակի օրը փակեց Լաչինի միջանցքը ճիշդ այն հատուածին մէջ, ուր տեղակայուած են ուս խաղա-

ղապահները: Անցակէտի տեղադրումէն յետոյ Շուրջի շրջանի 4 համայնքներ մնացած են լիակատար շրջափակման մէջ: Անցակէտի տեղադրումէն աւելի քան 24 ժամ անց Ռուսիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ «միակողմանի եւ չհամաձայնեցուած գործողութիւններու հետեւանքով ատրպէյճանական կողմը արգելափակած է Լաչինի միջանցքով երթեկութիւնը ուս խաղաղապահներուն համար մէկ անցակէտի մօտ: Խաղաղապահներու ղեկավարութիւնը կը բանակցի ատրպէյճանական կողմին հետ»:

Պաշտօնական Երեւանը նախօրէին խստօրէն դատապարտած էր Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքին ապօրինի անցակէտ տեղադրելու քայլը: Ի պատասխան, Պաքուն հակադարձած էր, որ Լաչինի մէջ անցակէտի տեղադրումը միանգամայն օրինական է, կը համապատասխանէ միջազգային իրաւունքի բոլոր կանոններուն, առաւել եւս, որ Փրակի եւ Սոչիի մէջ կայացած հանդիպումներու ընթացքին Հայաստանը ինք ճանչցած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը:

Հայաստանը Լաչինի Անցակէտի Հարցով Պիտի Դիմէ Արդարադատութեան Դատարան

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքին վրայ Ատրպէյճանի կողմէ անցակէտի տեղադրման փաստով Հայաստանը յառաջիկայ օրերուն պիտի դիմէ Արդարադատութեան Միջազգային Դատարան:

Այս մասին յայտնած է ՄԻԵԴ-ի մէջ ՀՀ ներկայացուցչութեան մամուլի խօսնակ Յասմիկ Սամուէլեանէն: Նշենք, որ Ատրպէյճանը պաշտօնապէս յայտարարած է Լաչին

(Բերձոր)-Ստեփանակերտ ճանապարհին ստուգիչ անցազրային կէտի տեղակայման մասին: Յիշեցնենք, որ ատրպէյճանական կողմը, հերթական անգամ կոպտօրէն խախտելով 2020 թ. եռակողմ յայտարարութեան դրոյթները եւ շարունակաբար ապատեղեկատուութիւն տալով Հայաստանէն Արցախ գէնքի տեղափոխութեան վերաբերեալ, փակած է Արցախ-Հայաստան սահմանագիծին գտնուող Հակարիի կամուրջը:

հուն Պայրամովը Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով ԱՄՆ պետական քարտուղարի օգնականի տեղակալ Էրիքա Օլսոնի հետ հանդիպման ընթացքին անդրադարձած է հայ-ատրպէյճանական յարաբերութիւններուն. «Ատրպէյճանը, որպէս հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման, նաեւ՝ հետա-

գային խաղաղութեան համաձայնագրի ստորագրման հիմնական նախաձեռնութիւնը յառաջ քաշած կողմ, շահագրգռուած է գործընթացի յաջող աւարտով»:

Պայրամով յայտարարած է, որ հայկական կողմը խաղաղութեան պայմանագրին վերաբերեալ Ատրպէյճանի վերջին առաջարկներուն վեց շաբաթէ չէ պատասխանած:

Թուրքիոյ Սեջ «Կանաչներու Չախ» Կուսակցութիւնը Հայոց Յեղասպանութեան Յիշատակի Միջոցառում Կազմակերպած Է



«Կանաչներու Չախ» կուսակցութեան անդամները Պոլսոյ մէջ կը նշեն հայերու ցեղասպանութիւնը, Յեղասպանութեան օրը

Թուրքիոյ մէջ գործող «Կանաչներու Չախ» կուսակցութեան անդամները Սթամպուլի Գուրթուլու թաղամասին մէջ (հին անուանումը Թաթալա), ուրկէ 108 տարի առջ սկսած է հայերու ցեղասպանութիւնը, Յեղասպանութեան օրուան նուիրուած յիշատակի միջոցառում ունեցած են: Այս մասին կը յայտնէ sendika.org-ը:

Միջոցառման ելոյթ ունեցած է «Կանաչներու Չախ» կուսակցութեան պատգամաւորի թեկնածու, 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան կազմակերպիչ ձեմալ փաշայի թոռ Հասան ձեմալը:

«Միւրեւի Հրանդ Տինքի ցաւը զիս այստեղ բերած է: Միւրեւի Հրանդ Տինքի ցաւը զիս ծանօթացուց սիրելի հայ ժողովուրդի ցաւին: Հրանդ Տինքի շնորհիւ ես սկսայ հասկնալ այս հողի առհասարակ ոչ-լաւ էջերը: 2017 թուականին գրածս գիրքը կը կրէ 1915 թուականի Հայոց Յեղասպանութիւն անունը, եւ ինչպէս ըսի, Հրանդ Տինքի ցաւը եղած է նաեւ գիրքը գրելու ժամանակ: Ես այսօր այստեղ եմ՝ կիսելու իմ հայ եղբայրներու ցաւը», ըսած է Հասան ձեմալը:

Անոր ելոյթին յետոյ կուսակցութեան մէկ այլ անդամ Անի Քալքը ներկայացուցած է կուսակցութեան Շիշլիի գրասենեակի յայտարարութիւնը:

«Ապրիլ 23-ի լոյս 24-ի

գիրքն էր: Օսմանեան կառավարութիւնը «Միւրեւի եւ Յաւաշադիմութեան» գլխաւորութեամբ ժողովուրդի մը բնաջնջման ուղղութեամբ այստեղ ըրաւ առաջին քայլը: Անոնք մեծ գործութիւն սկսան այս շրջանին, որ հետագային կոչուեցաւ Գուրթուլու, իսկ հին անունը Թաթալա էր: Հրամայուած էր անյապաղ ձերբակալել այդ ժամանակաշրջանի մայրաքաղաք Սթամպուլի մէջ բնակող հայ համայնքի մօտ 250 մտաւորականներ, հասարակական կարծիքի առաջնորդներ, գրողներ, լրագրողներ, արուեստագետներ եւ գործարարներ: Թաթալան այն շրջանն էր, ուր նախաձեռնուած էր ամենաշատը իրականացուած են այս ձերբակալութիւնները: Ձերբակալութիւնները շարունակուած են յաջորդ օրերուն: 24 ժամուան ընթացքին աւելի քան 2000 մարդ, այդ շարքին՝ Սթամպուլի նշանաւոր հայեր, արտաքսուած են: Միաժամանակ ամբողջ Անատոլիոյ մէջ սկսած է հարկադիր տեղահանութիւն, որուն նպատակն էր արտաքսել հայերը իրենց տուններէն: Անատոլիական հողերը հազարաւոր տարիներ իրենց տունը դարձուցած հայ ժողովուրդը տարագրութեան անուան տակ իր հայրենիքէն վտարուելով՝ մահուան կը ճամբորդուէր անոնց կողմէ, որոնք եկած են այդ տարածքներ անոնցմէ հազարաւոր տարիներ յետոյ», կ'ըսուի յայտարարութեան մէջ:

Ապրիլ 24-ի Իր Ուղերձին մէջ Արայիկ Յարութեան Կ'ըսէ՝ Պահը Օրհասական Է

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութեանն էր Ապրիլ 24-ին ուղերձ յղած է Յեղասպանութեան զոհերու յիշատակի օրուան առիթով: Ուղերձին մէջ, մասնաւորապէս, ըսուած է.

«Միւրեւի՝ հայրենակիցներ, Ամէն տարի Ապրիլի 24-ին մենք ազգովի յիշում եւ ոգեկոչում ենք Հայոց Յեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակը, մեր 1,5 միլիոն սուրբ նահատակների, որ դարձան թուրքական եթաղանի զոհ միայն այն բանի համար, որ հայ էին:

«Այսօր Արցախը կանգնած է թուրք-ատրպէյճանական հայատեաց ու ցեղասպանական քաղաքականութեան նոր եւ իրական

վտանգների առջեւ: Մեծ Եղեռնից 108 տարի անց էլ հայը շարունակում է կենաց-մահու պայքար մղել իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու, սեփական իրաւունքներն ու ազատութիւնները, ազգային շահերն ու արժանապատուութիւնը պաշտպանելու համար:

«134 օր շարունակուող շրջափակման մէջ պահելով Արցախի 120 հազար խաղաղ բնակչութեանը, տասնեակ հազարաւոր երեխաների ու ծերերի, ոտնահարելով միջազգային իրաւունքի բոլոր նորմերն ու սկզբունքները, անստեղծով միջազգային հանրութեան յորդորները եւ ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանի որոշումը՝ Ատրպէյ-

Ատամ Շիֆ Արցախի Անկախութիւնը Ծանցող Օրինագիծ Պիտի Ներկայացնէ Գոնկրէսին

ԱՄՆ Գոնկրէսի Հայկական Հարցերով Խումբի փոխնախագահ Ատամ Շիֆ Գոնկրէս պիտի ներկայացնէ օրինագիծ, որով կոչ կը կատարուի ճանչնալու Արցախի անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը, ինչպէս նաեւ դատապարտելու Ատրպէյճանի յարձակումը:

«Վաղը առաւօտեան ես պիտի ներկայացնեմ օրինագիծ՝ ճանչնալու Արցախը, Արցախի անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը: Ասով ԱՄՆ-ն պաշտօնապէս պիտի ճանչնայ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը», ըսած է Ատամ Շիֆը:

Գոնկրէսականը նաեւ մտահոգութիւն յայտնած է Ատրպէյճանի կողմէ նախապատրաստուող հնարաւոր յարձակման առնչութեամբ:

«Ես չափազանց մտահոգուած եմ, որ Ատրպէյճանը հերթական պատերազմ կը ծրագրէ Արցախի դէմ, հերթական պատերազմը Հայաստանի դէմ, եւ կը կարծեմ, որ սա հօգր ուղերձ պիտի ըլլայ Պաքուի բռնապետին, որ երկկուսակ-

ցական հիմունքներով Գոնկրէսը սատար պիտի կանգնի Արցախի ժողովուրդի իրաւունքներուն», նշած է Շիֆը՝ շեշտելով, որ Ատրպէյճանի կողմէ Արցախի շրջափակման պէտք է վերջ դրուի:

Գոնկրէսի Հայկական Հարցերով Խումբի փոխնախագահը նաեւ արձանագրած է, որ շրջափակման հետեւանքով ստեղծուած մարդասիրական ճգնաժամը աւելի կը վատթարանայ: Իրավիճակին վրայ ազդելու համար Շիֆ կարեւոր համարած է բոլոր գոնկրէսականներուն ներգրաւումը՝ ԱՄՆ վարչակազմին վրայ ճնշում գործադրելու համար:

«Վարչակազմը պէտք է ընէ աւելին, քան խօսիլ բարոյապէս համարժէք եզրոյթներով: Այստեղ բարոյական համարժէքութիւն չկայ: Բռնութիւններէ եւ սադրանքէ գերծմնալու կոչերը երկու կողմերուն ուղղելը օգուտ չի բերեր, երբ միայն մէկ կողմն է յարձակողը, եւ այդ Պաքուն է», շեշտած է Շիֆը:

Պիտի Ստեղծուի Հայոց Յեղասպանութեան Զոհերու Տուեալներու Ելեկտրոնային Կայք

Հայաստանի մէջ պիտի ստեղծուի Հայոց Յեղասպանութեան վերապրածներու եւ Յեղասպանութեան զոհերու տուեալներու ելեկտրոնային կայք, ուր իմի պիտի բերուի Յեղասպանութեան զոհերուն անունները՝ կենսագրական տուեալներով: Այս մասին ասուլիսի ժամանակ յայտնեց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յարութեանը:

«Ելեկտրոնային կայքի ստեղծումը կարեւորագոյն խնդիրներէն է, որի գլխաւոր նպատակն է իմի բերել Յեղասպանութիւնը վերապրածներին եւ Յեղասպանութեան զոհերի անունները՝ կենսագրական տուեալներով», ըսաւ Մարութեանը:

Անոր խօսքով՝ նախաձեռնութիւնը կ'իրականացուի պետական աջակցութեամբ: Համապատասխան գրաւոր երաշխիքները թանգարանի ղեկավարութիւնը ստացած է ինչպէս Արտաքին քաղաքական գերատեսչութենէն, այնպէս ալ ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակուցի եւ Մարմնակրթութեան նախարարութենէն: Թանգարան-հիմնարկը դիմած է Գիտութեան Պետական կոմիտէի հետագայ քայլերուն համար: Մարութեան նշեց, որ այս գործընթացը կ'ընդունի 10-15 տարի տեւել:

Ներկայիս աշխատանքներ կը տարուին նաեւ աւագ դպրոցի աշակերտներուն եւ ուսանողներուն համար Հայոց Յեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան դասընթացի ներդրման ուղղութեամբ: Անցեալ տարի այս թեմայով կայացած է «Հայոց Յեղասպանութեան թե-



Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յարութեան

մայի դասաւանդման մարտահրաւէրները 21-րդ դարուն» գիտաժողովը, որմէ յետոյ ՀՅԹՀ-ի ղեկավարութիւնը դիմած է ԿԳՄՄ նախարարութիւն: Ստեղծուած է 18 հօգիէ բաղկացած յանձնաժողով, որ զբաղած է ծրագրի մշակմամբ, որմէ յետոյ այն կրկին ուղարկուած է ԿԳՄՄ նախարարութիւն:

«Գիտաժողովի եւ հանդիպումների ընթացքում շատ քննարկուեց էր, որ Հայոց Յեղասպանութեան թեման պէտք է դասաւանդել, բայց ամբողջ հարցն այն է, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ պէտք է դասաւանդուի: Կայ համաշխարհային փորձ, որը պէտք է պարզապէս տեղայնացնել եւ կիրառել: Գործընթացը ամէն դէպքում սկսուած է եւ իր հունով յառաջ է գնում», պարզաբանեց Մարութեանը:

մէկ: Մենք պէտք է դասեր քաղենք անցեալից ու միասնաբար կերտենք հայ ժողովրդի ապագան՝ այսօր եւ այստեղ:

«Պահն օրհասական է, լինելու չլինելու հարց է ոչ միայն Արցախի, այլեւ՝ հայոց պետականութեան համար: Այսօր քան երբեք պէտք է խօսքից անցնել գործի», ըսաւ Արցախի նախագահը:

ճանի բռնապետական իշխանութիւնները փորձում են ծնկի բերել մեր ժողովրդին:

«Սակայն մենք անդրդուելի ենք ու վճռական Արցախը միշտ հայկական ու անառիկ պահելու ճանապարհին: Մենք այլընտրանք չունենք: Հայը չի կարող նորից հայրենիք կորցնել, դառնալ տարագիր ու սփռուել աշխարհով

Հայոց Ցեղասպանութեան 108-Ամեակի Միջոցառումները Լոս Անճելըսի Մէջ



Տարբեր միջոցառումներով նշուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 108 ամեակը՝ Լոս Անճելըսի եւ շրջակայ քաղաքներուն մէջ:

Այցելութիւն Սոնթեպելլոյի Յուշարձան

Ապրիլի 23-ի առաւօտեան Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանի այցելեցին հայկական տարբեր կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ՝ ծաղկէպսակներ զետեղելու համար Յուշարցանին մօտ: ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի պատուիրակութիւնը այցելեց Մոնթեպելլո եւ ծաղկէպսակով մը խոնարհեցաւ Հայ նահատակներու յուշարձանին առջեւ:




Հսկում Փաստինայի Մէջ

Կիրակի, Ապրիլի 23-ի երեկոյեան ժամը 7-ին, Փաստինայի քաղաքային զբօսայգիին մէջ, տեղի ունեցաւ սրբադասուած հայ նահատակներուն նուիրուած գիշերային հսկում եւ մոմավառութիւն՝ նահատակաց յուշարձանին առջեւ, կազմակերպութեամբ ՄԴՀԿ ընկերային ղեկանին:


Ժողովրդային սոցն հաւաքի ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան եւ Վարիչ Մարմնի ու Կուսակցութեան հովանաւորութեան տակ գործող կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, որոնք տիտղոս մեղեդիներու հնչիւններու ներքեւ, ծաղկեփունջեր եւ մեխակներ զետեղեցին յուշարձանին շուրջ:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Կազմակերպիչ Մարմնի՝



ՄԴՀԿ ընկերային յանձնարումներն անունով՝ հանդիսավար Ալին Պողարեանի, որ իր ելոյթին մէջ շեշտեց պահանջատէր հայ ժողովուրդի դէմ գործուած 20րդ դարու մեծագոյն ոճիրին ահաւորութեան ու անդրադարձին վրայ: Սրբադասուած նահատակներու յատուկ շարականի երգեցողութիւնը կատարեցին սարկաւազներ՝ Յակոբ Կակոսեանը եւ Յակոբ Աճէմեանը:

Այս առթիւ ելոյթ ունեցաւ Գալիֆորնիա գտնուող Ս. Էջմիածնի միաբաններէն՝ հոգեշնորհ Տ. Երեմիա վրդ. Աբգարեան: Ան բռն կերպով դատապարտեց մեր ազգի հաւատաւոր գաւակներուն դէմ գործուած



ահաւոր եղեւնագործութիւնը, որուն գոհերն այսօր կը հանգչին երկնային օթեւաններու մէջ: Տէր Երեմիա գուգահեռ մը ըրաւ եւ Արցախի հայութեան դիմակալած օրհասական իրավիճակին, որ դարձած է այս օրերու գլխաւոր հարցը, մաղթելով որ խաղաղութիւնն ու անդորրութիւնը տիրապետող դառնայ շրջանին մէջ, համահայկական միասնութեան ներքեւ:

Արթուր Մեսեանի «Ուր էիր Աստուածը» երգախառն ասմունքով ու ապրումով կատարեց Լենա Մանուկեան: Խորհրդաւոր յուզականութիւն մը ունէր նաեւ հայկական տուտուկի մեղամաղձոտ մենանուագի կատարումը՝ Մամիկոն Յարութիւնեանի կողմէ:

Երիտասարդ Սերունդի Ներկայացուցիչ Արթիւր Կաթակեան հանդէս եկաւ Անգլերէն լեզուով իր գրած ու հայութեան նուիրուած բանաստեղծութեամբ:

Իրիկնային հսկում-հաւաքը իր աւարտին հասաւ Տէրունական աղօթքով:

Պատարագ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին Ներս

Կիրակի, Ապրիլի 23ին Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Մեծ Եղեռնի մէկ ու կէս միլիոն հայ սրբացած նահատակներու յիշատակին յատուկ արարողութիւն, նախագահութեամբ օրուան պատարագիչ թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Ան յաւուր պատշաճի իր քարոզին մէջ ներկաներուն փոխանցեց նահատակներուն նուիրական պատգամը:



Համահայկական Ոգեկոչում Կլենտլի Մէջ

Ապրիլի 24-ին, Երկուշաբթի, համահայկական ոգեկոչման Մարմնի նախաձեռնութեամբ, կէսօրէի ետք ժամը 4:30-ին, տեղի ունեցաւ ոգեկոչման հանդիսութիւն, Կլենտլիի Քաղաքապետարանի շրջափակին մէջ: ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ-ի սկաւառներու կողմէ կատարուած դրօշակի արարողութեանն եւ ԱՄՆ-ի ու Հայաստանի պետական հիմներու ունկնդրութեանն ետք, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար ընկ. Միհրան Խաչատուրեան: Ան՝ Համահայկական Ոգեկոչման Մարմնի անունով, պարզեց ժողովրդային հաւաքի նպատակը որ է կառչած մնալ հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն եւ առաջին առնել նոր ցեղասպանութիւններու, որոնք առկայ են ներկայ ժամանակներուն:

Յաջորդաբար խօսք աւին եւ Արցախի ազատատենչ ժողովուրդի ու հայութեան արդար դատին ի նպաստ, զօրակցական կուռ ելոյթներով հանդէս եկան գոնկրեսական Ատամ Շիֆ, Գալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Քրիս Հոլտըն, նահանգային տեսուչ Թոնի Թիւրմոնտ, Լոս Անճելըս գաւառի վերակացու Լինտա Սոլիս, Լոս Անճելըս քաղաքի քաղաքապետական Խորհուրդի նախագահ Փոլ Գրիգորեան, խորհրդական Նիթի Ռամանօ, Կլենտլիի քաղաքապետ Տան Պրոթման, Կլենտլիի Քաղաքապետական Խորհուրդի անդամներ Էլէն Ասատրեան, Արտաշէս (Արտի) Քասախեան եւ ուրիշներ, որոնք զօրավիզ կանգնեցան ատրպէյճանական սաղրանքներուն դէմ պայքարող հայ ժողովուրդին, միաժամանակ շեշտելով ազգային միասնութեան ամրապնդումն ու միջազգային կառուցներու,

Armenia Pays Tribute to the Victims of Armenian Genocide



YEREVAN—Armenia’s top leadership, led by Prime Minister Nikol Pashinyan, visited today morning the Tsitsernakabert Genocide Memorial in the capital Yerevan to pay tribute to the victims of the Armenian Genocide.

The annual daylong procession began with an official wreath-laying ceremony at the hilltop memorial led by Pashinyan, Parliament Speaker ALEN SIMONYAN and President VAHAGN KHACHATURYAN.

“On April 24, we commemorate the 1.5 million victims of the Armenian Genocide carried out by the Ottoman Empire at the beginning of the 20th

century, and tens of thousands of citizens will carry out a procession of respect, remembrance and meditation to the Tsitsernakabert Memorial today.

“The April 24 procession is perhaps the most impactful occurrence that has predetermined and is predetermining our reality, an exceptional day to think about our history, past and future,” Pashinyan said in a statement released on the occasion.

He stressed that only a “developed and sovereign state” can ensure

Continued on page 4

Azerbaijan Sets Up Checkpoint Along Lachin Corridor in Violation of 2020 Ceasefire Agreement



YEREVAN—Azerbaijan on Sunday set up a checkpoint on the Lachin corridor, only road connecting Nagorno Karabakh republic with Armenia, in violation of 2020 ceasefire agreement.

In a statement, Azerbaijan’s Foreign Ministry cited “the continued systematic and large-scale misuse” of the only overland route “for illicit purposes by the Armenian side.”

“The said control mechanism shall be implemented in interaction with the Russian peacekeeping force,” the statement added.

The Armenian side has, for its part, accused Azerbaijan of seeking a pretext for isolating Karabakh Armenians.

Karabakh authorities accused Baku of violating the terms of the Moscow-brokered 2020 ceasefire agreement under which the road passing through a five-kilometer-wide area known of Lachin corridor should be under the control of Russian peacekeepers.

Continued on page 2

President Joe Biden's Annual Armenian Remembrance Day Message

WASHINGTON, DC -- For the third time since his election as United States president, Joe Biden has released an annual statement on Armenian Remembrance Day released by the White House on April 24, paying tribute to the memory of the Armenian genocide victims:

“Today, we pause to remember the lives lost during the Meds Yeghern—the Armenian genocide—and renew our pledge to never forget.

“On April 24, 1915, Ottoman authorities arrested Armenian intellectuals and community leaders in Constantinople—the start of a systematic campaign of violence against the Armenian community. In the years that followed, one and a half million Armenians were deported, massacred, or marched to their deaths—a tragedy that forever affected generations of Armenian families.

“As we join nations around the world in remembering this painful history, we also reflect on the resilience and resolve of the Armenian people. So many of those who survived were forced to begin new lives in new lands—including the United States. Here and around the world, the Armenian people have met the evil of hate with hope. They rebuilt their communities. They nurtured their families and preserved their culture. They strengthened our nation. They also told their stories—and those of their ancestors—to remember and to ensure that genocide like the one that happened 108 years ago is never again repeated.

“Today, let us renew this pledge. Let us recommit to speaking out against hate, standing up for human rights, and preventing atrocities. And together, let us redouble our efforts to forge a better future—one where all people can live with dignity, security, and respect.”

Armenian Genocide Committee Holds Community-Wide Event Commemorating the 108th Anniversary of the Armenian Genocide



GLENDALE, CA—On April 24, 2023, elected officials, community members and leaders gathered in the plaza of Glendale City Hall to mark the 108th anniversary of the Armenian Genocide, when 1.5 million Armenians perished at the hands of the Ottoman Turkish government from 1915-1923. The event was organized by the Armenian Genocide Committee (AGC) which is an assembly of the largest religious, political, cultural, athletic and professional organizations of the southern California Armenian community.

Master of Ceremonies for the solemn event was AGC Chairman, Mehran Khatchadorian. He welcomed the large audience and thanked them for being present and raising their voices to demand justice for the unpunished atrocities. In his opening remarks, Mr. Khatchadorian expressed

an ominous theme that was shared by many of the guest speakers at the event, “Today our people confront a perilous situation as they did 108 years ago, as Azerbaijan and Turkey continue their policies of ethnic cleansing and annihilation of the indigenous Armenian population of the Armenian Highlands. It is imperative that today on April 24 that we not only remember our martyrs, but that in addition, we speak with one voice, loudly and clearly, alerting the world of the need to prevent genocide taking place again in Artsakh,” said Mr. Khatchadorian.

Among the distinguished list of keynote speakers, included: Congressman Adam Schiff who announced that he introduced an unprecedented bill in the U.S. Congress for the United States

Continued on page 4

INTERVIEW:

Congressman Schiff Warns of Future Attacks on Armenia and Artsakh, Urges US to Condemn Baku

By Christine Aghakhanian

In a recent interview with Massis Post, Representative Adam Schiff (D-Burbank) discussed the US government's lackluster stance on condemning Azerbaijan's unprovoked attacks on Armenia and Artsakh and presented steps to prevent another large-scale attack on the Armenian people.

"I have been in constant communication with the Biden administration to urge that we cut off Azerbaijan from any further funding, that we explore sanctions on Azerbaijan for war crimes and that we use all of our diplomatic power to marshal the international community against the blockade of the Lachin corridor, as well as prevent another outbreak of war," said Congressman Schiff. "I have never been more concerned than I am today, that Azerbaijan may be planning another war against Armenia, more than we have seen before. I am also working on legislation that we hope to introduce soon, to recognize the independence of Artsakh," he added.

Congressman Schiff conveyed his thoughts on both the Biden and Trump administration's stance on Baku's aggression towards Armenia and Artsakh, emphasizing his disappointment on their lack of ability to fully stand with the Armenian people.

"The Biden administration was the first administration ever, to recognize the Armenian Genocide. That was something I was working towards. For twenty years I carried the Genocide resolution in the House which finally passed in 2019 and the president's recognition followed sometime thereafter," the Congressman asserted. "I think the Biden administration is more engaged in the region, but I am still not satisfied because one thing we have seen across administrations of both parties, is this false language of equivalence, where both sides are called upon to refrain from violence when there's only one aggressor and that's Azerbaijan. When we use language of false equivalence, it en-



courages the aggressor and the aggressor comes to believe they will never be held accountable. I have been trying to stop funding for Azerbaijan for years and this has been a problem under both administrations," he added.

Schiff believes the US can take tangible steps to change the trajectory of Baku's plans to wage war on Armenia and ethnically cleanse Artsakh, adding that the first step is to stop funding Azerbaijan. He acknowledges that the Biden administration has issued good statements about the need to re-open the Lachin corridor, however, more needs to be done to stop the damage inflicted by Aliyev's regime.

"As long as we are providing funding to Azerbaijan, they are going to listen to the money, not to what we have to say. Until we cut off the money, they are going to feel that they can do whatever they want to do with impunity. The first step is cutting off the money and the next step is to sanction them and support war crimes investigations. We need to change section 907 and remove presidential discretion, because presidents of both parties have ignored its fine language. If the war crimes and the belligerence we see out of Baku is not enough to trigger cutoff under 907, then 907 is not

working anymore," Schiff reiterated.

The overall mood in Washington towards the attacks on Armenia and Artsakh is apathetic, according to Congressman Schiff, particularly with his colleagues who are not a part of the Armenian Caucus. He attributes this to a real lack of awareness and warns that multiple neighboring countries may get involved in the war, including Turkey, Iran and possibly Russia, which may result in a situation where people will regret not paying enough attention on the dire situation in the Caucasus.

Although the future of the Armenian people seems grim, Congressman Schiff remains optimistic and encourages the Armenian American community to hold onto hope and continue fighting for their sisters and brothers in the Homeland. "The Armenian people are extraordinarily resilient, they have always been outnumbered and they have always been in a difficult neighborhood. There is no vanquishing the Armenian people. The Armenian people are survivors, but that does not mean that we can let up at all in our efforts. There is room for hope, but we need to get through this period right now and that is where we have to focus," he

stated.

As the representative of the largest Armenian American community in the US, Congressman Schiff also discussed the importance of commemorating the Armenian Genocide to raise awareness of injustices past and present. "If we do not speak truthfully about the Armenian Genocide, if we do not educate the next generation of what took place, it simply makes it more likely that it is going to reoccur and if not to the Armenian people, then to others. I think what we are seeing in the region now, is the continuation of an effort to wipe out the Armenian people and so the history is very important to understanding the present. Hitler is reported to have said in support of the Holocaust 'who after all remembers the Armenians?' and if dictators and despots feel they can get away with mass murder they will do it again," he declared.

"I feel very grateful to represent the largest Armenian community in the country. I am grateful for the relationship that we have and grateful for the support I receive in the community. I am just very proud to represent the community," Schiff added.

Armenia to Introduce Voluntary Military Service for Women



YEREVAN—The Armenian government announced on Friday plans to introduce voluntary military service for women.

A relevant bill approved by the government is part of its declared defense reforms and a gradual transition to a professional army promised by Prime Minister Nikol Pashinyan.

According to Defense Minister Suren Papikyan, after conscription, women will not be able to terminate or postpone the military service due to "family circumstances."

"Until the day of conscription, they can refuse mandatory military service, and will serve in training military units," Papikyan further clarified.

Under the bill drafted by the Armenian Defense Ministry, the six-month service will become obligatory for young women once they are formally drafted by the country's armed forces.

They will serve in military training units for six months and then have the option of becoming contract soldiers eligible for combat duty. Also, every female conscript will be paid 1 million drams (\$2,600) after complet-

ing the service.

"It will be a normal service, not a stroll through barracks," Pashinyan said during a cabinet meeting in Yerevan.

The bill will likely be approved by the Armenian parliament. In that case, the military will be able to start enlisting women for the six-month duty already this fall.

The Armenian army already has female soldiers and officers within its ranks. Their current number is not revealed by the Defense Ministry.

It stood at over 1,400 in 2013 when Armenia's two military academies began admitting women as cadets. The vast majority of the female personnel held clerical positions in the Defense Ministry, army detachments and other military structures.

There was also a growing number of women performing combat roles. They participated in the 2020 war in Nagorno-Karabakh and subsequent fighting on Armenia's border with Azerbaijan. Five Armenian women were killed during last September's large-scale border clashes.

Azerbaijan Sets Up Checkpoint

Continued from page 1

In a statement disseminated by the state-run Information Center on Sunday the authorities stressed that Nagorno-Karabakh considers the closure of the bridge over the Hakari river by Azerbaijan to be "a criminal step aimed at strengthening the blockade of Artsakh [Nagorno-Karabakh - ed.] and ethnic cleansing."

According to the Information Center, Nagorno-Karabakh president Arayik Harutyunyan has called an emergency meeting of the republic's Security Council to discuss "the latest developments and relevant actions of the authorities."

"All parties to the tripartite declaration, and especially the Russian Federation, to immediately start discus-

sions on lifting the blockade of Artsakh and preventing the establishment of an Azerbaijani checkpoint," the Security Council said in a statement.

Baku's decision to set up a border checkpoint at the beginning of the road from Armenia to Nagorno-Karabakh comes a day after a report by Azerbaijan's Ministry of Defense about an incident in which three Azerbaijani servicemen were reportedly injured when their vehicle was blown up on a mine allegedly supplied from Armenia. In another statement the ministry claimed that Russian peacekeepers controlling the area again helped Armenians transport "military cargoes" from Armenia to Nagorno-Karabakh via the Lachin road. The Armenian side has denied both accusations.

Evil Continues to Live

Armenian Council of America Statement on Armenian Genocide Remembrance Day:

Today we mark the 108th anniversary of the Armenian Genocide, where we honor the 1.5 million innocent men, women, and children who fell victim at the hands of the Ottoman Empire. The merciless, barbaric, and systematic torture and murder of Armenian scholars, artisans, architects, politicians, physicians, lawyers, and religious leaders, has been widely recognized and globally condemned. Once vibrant and flourishing villages and cities were left in ruins, entire families abandoned, and generations torn apart. The world witnessed the cultural destruction of Armenian lands, the desecration of churches and monuments, and the attempted annihilation of thousands of years of tradition.

To this day, the government of Turkey refuses to acknowledge, nor denounce the atrocities for which their murderous ancestors took pride in committing. The president of Turkey, along with his predecessors, have continuously mocked the memory of those who perished, attempting to rewrite history for their own financial and political gain. For each year that passes, their denial compounds their own guilt, deepens the divide of nations, and further marks a stain on the integrity of human rights.

While April 24 is internationally recognized as a day of mourning for the victims of the past, it is also a day which Armenians throughout the diaspora gather and unite for the common cause for a prosperous future. If we allow the teachings of the past to collectively guide us, then perhaps we may stand a chance to prevail against the risk of letting history repeat itself. Sadly it appears the Turkish government has reclaimed its promise to bring into fruition the genocidal ideologies to the twenty-first century.

Sheltered in the cloak of their denial, the Turkish government has continued to support the Azerbaijani government's increasing violence and aggression toward Armenians in Armenia and Artsakh. These acts have demonstrated their collective resolve to wipe out the Armenian people and revealed that their claims of commitment to peace are nothing more than a farce.

133 days ago, the Azeri government violated the terms of their agree-



ment pertaining to the Lachin Corridor, which was executed following the 2020 war. This isolated 120,000 ethnic Armenians in Artsakh cutting off their access to food, power, and medical treatment and other essential supplies. This blockade has escalated the humanitarian disaster that was left over from the 44 Day War in 2020. It has resulted in the ethnic cleansing of more than 30,000 Armenians from their homes in Shushi, Hadrut, and Shahumyan following Azerbaijan's occupation of those indigenous Armenian regions of Artsakh. This is but another addition to the long lists of human right violations and documented war crimes perpetrated by the Azeri government against Armenians. Azerbaijan continues its ongoing imprisonment of Armenian POWs and other detainees, and engaging in unconscionable extrajudicial execution of Armenians.

Therefore, while we take a moment to grieve in the memory of those who died at the hands of such evil more than 108 years ago today, we must remind ourselves that evil continues to live amongst us today. We must stand united against the persecution, oppression, and victimization of an entire ethnicity, nationality, and culture; for not only the right to live in peace, but rather the right to live.

